



ՄԻԶԱԶԳԱՅԻՆ

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՆՆԱ ՓԱԽԼՅԱՆ

ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների
ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու

ՍՈՒՍԱՆՆԱ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի ասիստենտ,
տնտեսագիտության թեկնածու

ԿԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի ասիստենտ,
տնտեսագիտության թեկնածու

ԾՈՎԱԿ ՈՍԿԱՆՅԱՆ

ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի ասպիրանտ

ՏԻԳՐԱՆ ՂԱԼԱՅԱՆ

ՀՊՏՀ կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն
մասնագիտացման մագիստրանտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Էլեկտրոնային առևտրով պայմանավորված ինստիտուցիոնալ վերափոխումները հասել են տնտեսական հարաբերությունների հիմքերին, քանզի ավանդական առևտրի ինստիտուտներին փոխարինելու են գալիս էլեկտրոնային նորարարական ինստիտուտները: Այս տեսանկյունից, էլեկտրոնային առևտրի աճի հրամայականը համապատասխան ենթակառուցվածքի և գործառնական միջավայրի ձևավորումն է, ինչը կապահովի շուկայի բոլոր մասնակիցների իրավահավասար մուտքը համաշխարհա-

յին էլեկտրոնային շուկա:

Լիարժեք օրենսդրահրավական բազայի սրբեղծումն էլեկտրոնային առևտրի զարգացման նախապայմանն է, ինչը ենթադրում է էլեկտրոնային գործարքների իրականացման ընթացակարգերի պարզեցում և շուկա մուտք գործելու խոչընդոտների վերացում: Բարենպաստ նորմատիվահրավական դաշտ ապահովելու համար պետք է իրականացվեն օրենսդրական բարեփոխումներ ինչպես ապրանքների և ծառայությունների էլեկտրոնային առևտրի կանոնակարգման ուղղությամբ, այնպես էլ դրա հետ կապված մի շարք ոլորտներում, ինչպիսիք են կիրառվող էլեկտրոնային վճարային համակարգերը, լոգիստիկ և մատակարարման շղթաների գործունեության խրախուսումը և այլն:

Հոդվածում ուսումնասիրվել են էլեկտրոնային առևտրի կարգավորման նպատակով միջազգային կառույցների և որոշ ինտեգրացիոն խմբավորումների կողմից առաջարկվող իրավանորմատիվային կառուցակարգերը, հստակեցվել են դրանց շրջանակում ՀՀ և ԵԱՏՄ այլ երկրների ստանձնած պարզավորությունները, դիտարկվել է էլեկտրոնային առևտրի իրավական կարգավորման մակարդակն առանձին երկրներում և տարածաշրջաններում: Էլեկտրոնային առևտուրը կարգավորող միջազգային իրավական շրջանակի համապեքստում, քննարկվել է ոլորտին առնչվող ՀՀ օրենսդրությունը, բացահայտվել են տարբեր իրավական ակտերում առկա թերացումներն ու հակասությունները, առաջարկվել են համարժեք լուծումներ:

Հիմնաբառեր. էլեկտրոնային առևտուր, փիպային օրենքներ, կոնվենցիաներ, համաձայնագրեր, Միավորված ազգերի կազմակերպություն, Առևտրի համաշխարհային կազմակերպություն, Համաշխարհային մաքսային կազմակերպություն

JEL: F13, L81

Ներածություն: Թվային տնտեսություն կառուցելուն երկրի պատրաստվածության լիարժեք և համակողմանի գնահատականը չի կարող սահմանափակվել զուտ թվային ենթակառուցվածքների զարգացածությամբ և համացանցի հասանելիությամբ: Այս առումով, թերևս, արդիականացված իրավական համակարգը և ճկուն կարգավորող օրակարգը խիստ կարևոր նախապայմաններ են թվային գործարքներն անվտանգ և դյուրին դարձնելու համար, քանի որ դրանք ապահովում են օժանդակ բիզնես-միջավայր՝ խթանելով թվային շուկաների հանդեպ սպառողների վստահությունը:

Էլեկտրոնային առևտրի իրավական և տնտեսական հարաբերությունները կարգավորող միջավայրի ապահովումը համակարգված ջանքեր է ներառում բոլոր ոլորտներում, մասնավորապես՝ կարգավորումներ, որոնք կոյուրացնեն էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության, էլեկտրոնային ստորագրության, էլեկտրոնային վճարումների, սպառողների շահերի պաշտպանության, վաճառված ապրանքների վերադարձի ձևակերպման, վեճերի կարգավորման, անձնական տվյալների պաշտպանության և այլ մեխանիզմների կիրառումն էլեկտրոնային առևտրում:

Միաժամանակ, էլեկտրոնային առևտրի կարգավորման շրջանակները կարող են ուղղակի խոչընդոտներ առաջացնել էլեկտրոնային առևտրի համար: Վերջինս, թվային ապրանքներով և ծառայություններով, ենթակա է մաքսային և հարկային կարգավորման: Սակայն, ավանդական հարկային վարչարարության շրջանակում հաճախ դժվարություններ են առաջանում

հարկման օբյեկտի, հարկման վայրի, հարկման բազայի որոշման և այլ խնդիրների շուրջ: Բազմաթիվ երկրներ փորձում են ինքնուրույն մշակել նման կարգավորման շրջանակներ, սակայն արդյունավետության տեսանկյունից նպատակահարմար է միջազգային նորմերի կիրառումը: Այս տեսանկյունից, հատկապես կարևոր է էլեկտրոնային առևտրի մասով ԵԱՏՄ օրենսդրության ներդաշնակեցումը և կրկնակի հարկման բացառումը:

Սույն հետազոտությունը նպատակաուղղված է ուսումնասիրելու էլեկտրոնային առևտրի պետական և միջազգային իրավական կարգավորման շրջանակը՝ ուրվագծելով ՀՀ-ում և ԵԱՏՄ-ում ոլորտի զարգացումը խոչընդոտող իրավաօրենսդրական բացերը:

Միաժամանակ, հիմնախնդրի կարևորության ըմբռնման հիմքում այն համոզմունքն է, որ, պատշաճ իրավական կարգավորմամբ, գործունեության թափանցիկ և անվտանգ միջավայրի ապահովումն անհրաժեշտ նախապայման և երաշխիք է ոլորտի զարգացման համար:

Գրականության ակնարկ: Էլեկտրոնային առևտրի կարգավորման իրավական շրջանակի ուրվագծման հարցում մեծ է միջազգային կազմակերպությունների դերը:

Ն.Ս. Յեմանովայի պնդմամբ՝ էլեկտրոնային առևտրի իրավական կարգավորման համատեքստում, միջազգային կազմակերպություններին վերագրվում են միջազգային առևտրային գործարքների իրականացման համար անհրաժեշտ կանոնների և ուղենիշների մշակման, էլեկտրոնային առևտրի զարգացման շրջանակային կանոնների ձևավորման և այդպիսով՝ միջազգային առևտրի կայունության ապահովման նպատակներ¹:

Առևտրի համաշխարհային կազմակերպության դիտարկումներում այն համոզմունքն է, որ բարենպաստ կարգավորող դաշտը կարևոր դերակատարում ունի թվային շուկայում սպառողների վստահության խթանման և թվային առևտրի ընդլայնման գործում՝ ապահովելով օրենքների և կանոնակարգերի համախումբ՝ ուղղված էլեկտրոնային փաստաթղթերի, էլեկտրոնային ստորագրությունների և էլեկտրոնային վճարումների կիրառմանը, առցանց հարթությունում սպառողի այնպիսի իրավունքների պաշտպանությանը, ինչպիսիք են գործարքի չեղարկման հնարավորությունը (օրինակ՝ էլեկտրոնային առևտրով ձեռք բերված ապրանքի վերադարձ), առցանց վեճերի լուծումը, կիրբեռանվտանգությունը, թվային հարթակների իրավական պատասխանատվությունը, գաղտնիությունը, տվյալների պաշտպանությունը և այլն²:

Միաժամանակ, որոշ հեղինակներ էլեկտրոնային առևտրի իրավական կարգավորման հարցերի ուսումնասիրության ընթացում եկել են այն համոզման, որ էլեկտրոնային առևտրի առանձնահատուկ բնույթը կանխորոշում է դրա իրավական կարգավորման հիմնական հատկությունները, այն է՝ էլեկտրոնային առևտրին անհրաժեշտ է համապարփակ իրավական կարգավորում՝ ինչպես մեկ երկրի ներսում, այնպես էլ միջազգային մակարդակում: Ուստի, բոլոր երկրները պետք է առաջնորդվեն սկզբունքորեն նույն հիմունքներով: Մինչդեռ, էլեկտրոնային առևտրի մեկուսացված իրավական ռեժիմ

¹ Տե՛ս **Еманова Н.С.**, Роль международных организаций в развитии электронной торговли// Вестник ЮУрГУ. Серия «Право», 2014, том 14, N3, էջ 56-60:

² Տե՛ս **WTO**, World Trade Report 2018: The Future of World Trade: How Digital Technologies are Transforming Global Commerce, Geneva, էջ 45:

հաստատելու ցանկացած փորձ, ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակում, անխուսափելիորեն կհանգեցնի էլեկտրոնային գործարքների իրականացման հետ կապված խնդիրների: Հետևապես, տեղեկատվական տարածքում, ձեռնարկատիրական գործունեության զարգացման և պաշտպանվածության ապահովման նկատառումներով, անհրաժեշտ է առաջին հերթին մշակել էլեկտրոնային տնտեսական գործունեության ընդհանուր նորմեր³:

Ըստ Ասիա-խաղաղովկիանոսյան տարածաշրջանում ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական հարցերով հանձնաժողովի (UN ESCAP) զեկույցի՝ իրավական և ենթակառուցվածքային միջավայրը հզոր խթան է էլեկտրոնային առևտրի զարգացման համար, մինչդեռ, թույլ իրավական կարգավորումը կարող է հանգեցնել էլեկտրոնային առևտրի գործարքների նկատմամբ վստահության ցածր մակարդակի՝ խոչընդոտելով էլեկտրոնային առևտրի իրականացումը⁴: Էլեկտրոնային առևտրի իրավական հիմքերը ձևավորվում են չորս հիմնական ուղղություններով՝ էլեկտրոնային գործարքներ, սպառողի պաշտպանություն, տվյալների պաշտպանություն ու գաղտնիություն և կիրառական ցավորություն⁵:

Դեռևս 1985 թ. ՄԱԿ-ի Միջազգային առևտրի իրավունքի հանձնաժողովն (UNCITRAL) ընդունել է առաջարկությունների փաթեթ՝ ուղղված երկրների կառավարություններին և միջազգային կազմակերպություններին՝ վերջիններիս հորդորելով իրենց իրավասությունների սահմաններում վերանայել տվյալների ավտոմատ մշակման վերաբերյալ կանոնները՝ միջազգային առևտրում դրանց օգտագործման անհարկի խոչընդոտները վերացնելու համար⁶: Սա, թերևս, կարելի է համարել էլեկտրոնային առևտրի միջազգային կարգավորմանն ուղղված առաջին իրավական քայլը:

Էլեկտրոնային առևտրի միջազգային կարգավորման հաջորդ քայլերն առավել հասցեական էին. UNCITRAL-ի կողմից, ի աջակցություն երկրների, մշակվեցին տիպային օրենքներ: Դրանք են.

- 1996 թ. հունիսի 12-ին ընդունված UNCITRAL-ի «Էլեկտրոնային առևտրի տիպային օրենքը» (The Model Law on Electronic Commerce (MLEC))⁷, որը նպատակաուղղված է էլեկտրոնային կապուղիներով իրականացվող առևտրի ապահովմանը և դյուրացմանը՝ ազգային օրենսդիրներին տրամադրելով էլեկտրոնային առևտրի իրավական խոչընդոտների վերացմանը և այն ուղեկցող գործընթացների իրավաբանական կանխատեսելիության բարձրացմանն ուղղված՝ միջազգայնորեն ընդունելի կանոնների փաթեթ:

³ Տես **Ганжа К.П.**, Правовое регулирование электронной коммерции в России // Современные научные исследования и инновации. 2013, N10, <http://web.snauka.ru/issues/2013/10/27833>:

⁴ Տե՛ս UN ESCAP, Embracing the E-commerce Revolution in Asia and the Pacific, June 2018, էջ 31:

⁵ Տե՛ս նույն տեղը:

⁶ Տե՛ս UNCITRAL, Recommendations to Governments and International Organizations Concerning the Legal Value of Computer Records, 1985, <https://uncitral.un.org/sites/uncitral.un.org/files/media-documents/uncitral/en/computerrecords-e.pdf>:

⁷ Տե՛ս UNCITRAL Model Law on Electronic Commerce (Date of adoption: 12 June 1996, additional article 5 bis adopted in 1998), https://uncitral.un.org/en/texts/ecommerce/modellaw/electronic_commerce:

- MLEC տիպային օրենքի հիմնարար դրույթների գործնական կիրարկումն ապահովելու համար 2001 թ. հուլիսի 5-ին ընդունված UNCITRAL-ի հաջորդ՝ «Էլեկտրոնային ստորագրության տիպային օրենքը» (The Model Law on Electronic Signature (MLES))⁸, որն ուղղված է էլեկտրոնային ստորագրությունների ճանաչմանն ու դրանց կիրառման պարզեցմանը՝ էլեկտրոնային և ձեռագիր ստորագրությունների իրավահավասարության համար սահմանելով տեխնիկական հուսալիության չափանիշներ:
- UNCITRAL-ի տիպային օրենքների շարքը եզրափակում է 2017 թ. Հուլիսի 13-ին ընդունված «Էլեկտրոնային փոխանցելի գրառումների մասին տիպային օրենքը» (UNCITRAL Model Law on Electronic Transferable Records (MLETR))⁹, որը նպատակ ունի հնարավորություն ընձեռել էլեկտրոնային փոխանցելի գրառումներն օրինական կերպով օգտագործելու ինչպես ներքին, այնպես էլ միջսահմանային հարաբերություններում: MLETR տիպային օրենքն առայժմ ընդունվել է միայն մեկ երկրում՝ Բահրեյնում (2018 թ.):

Ընդ որում, տիպային օրենքներում յուրաքանչյուր դրույթ առաջարկվում է մի քանի ձևակերպմամբ, և երկրների օրենսդիր մարմիններն ազատ են այս կամ այն դրույթի ցանկալի ձևակերպումն ընտրելու կամ անհրաժեշտ փոփոխություններ կատարելու հարցում:

«Միջազգային պայմանագրերում էլեկտրոնային հաղորդակցության օգտագործման վերաբերյալ» ՄԱԿ-ի կոնվենցիան (ընդունվել է 23.11.2005 թ., ուժի մեջ մտել 01.03.2013 թ.)¹⁰ նպատակ ունի դյուրացնելու էլեկտրոնային հաղորդակցությունների օգտագործումը միջազգային առևտրում՝ վստահեցնելով, որ էլեկտրոնային եղանակով կնքված պայմանագրերը և փոխանակված այլ հաղորդակցությունները նույնչափ վավերական են և լիիրավ, որքան դրանց ավանդական թղթային համարժեքները: Կոնվենցիայի հիմնական դրույթները կազմված են ՄԱԿ-ի՝ մինչ այդ մշակված տիպային օրենքների տրամաբանությամբ: ԵԱՏՄ անդամ երկրներից կոնվենցիան ընդունել և վավերացրել է Ռուսաստանի Դաշնությունը:

Էլեկտրոնային առևտրի հիմնախնդիրները մշտապես գտնվում են առևտրի միջազգային կարգավորման համար պատասխանատու կառույցի՝ Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) դիտակետում: ԱՀԿ անդամ երկրների 2-րդ նախարարական ժողովի ընթացքում (Ժնև, 1998 թ.) ընդունվել է «Գլոբալ էլեկտրոնային առևտրի մասին» ԱՀԿ հռչակագիրը (Declaration on Global Electronic Commerce), որով ամրագրվել է համաշխարհային էլեկտրոնային առևտրին վերաբերող, այդ թվում՝ անդամ երկրների կողմից վեր հանվող խնդիրների ուսումնասիրությամբ զբաղվող համապարփակ աշխատանքային ծրագրի ստեղծման անհրաժեշտությունը: Միա-

⁸ Տե՛ս UNCITRAL Model Law on Electronic Signature (Date of adoption: 5 July 2001), https://uncitral.un.org/en/texts/ecommerce/modellaw/electronic_signatures:

⁹ Տե՛ս UNCITRAL Model Law on Electronic Transferable Records (Date of adoption: 13 July 2017), https://uncitral.un.org/en/texts/ecommerce/modellaw/electronic_transferable_records:

¹⁰ Տե՛ս United Nations Convention on the Use of Electronic Communications in International Contracts (New York, Date of adoption: 23 November 2005, Entry into force: 1 March 2013), https://uncitral.un.org/en/texts/ecommerce/conventions/electronic_communications:

ժամանակ, հռչակագիրը հավաստիացնում է, որ ԱՀԿ անդամ երկրները կշարունակեն էլեկտրոնային փոխանցումների (electronic transmission) նկատմամբ մաքսատուրքեր չկիրառելու փորձառությունը¹¹: Այս իմաստով, նկատի են առնվում էլեկտրոնային տեղեկատվության, փաստաթղթերի ու ապրանքների փոխանցումները բացառապես էլեկտրոնային կապուղիներով՝ առանց ֆիզիկական փոխանակման: Էլեկտրոնային փոխանցումների նկատմամբ մաքսատուրքեր չկիրառելու պայմանավորվածությունը պահպանվում է մինչ օրս՝ Գլխավոր խորհրդի 2019 թ. դեկտեմբերի 10-ի որոշմամբ երկարաձգվելով մինչև ԱՀԿ 12-րդ նախարարական ժողովը¹²:

Հռչակագիրը հիմք է հանդիսացել էլեկտրոնային առևտրի վերաբերյալ ԱՀԿ աշխատանքային ծրագրի¹³ մշակման համար, որի համաձայն՝ էլեկտրոնային առևտրի հիմնախնդիրների ուսումնասիրությունը մշտապես գտնվելու է ԱՀԿ 4 մարմինների՝ Ծառայությունների առևտրի խորհրդի, Ապրանքների առևտրի խորհրդի, Առևտրին առնչվող մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության հարցերով խորհրդի ու Առևտրի և զարգացման կոմիտեի ուսումնասիրությունների տիրույթում:

Կարևորելով էլեկտրոնային առևտրի միջսահմանային խոչընդոտների վերացումը և ծախսերի կրճատումը՝ Համաշխարհային մաքսային կազմակերպությունն (ՀՄԿ) աշխատանքներ է կատարում էլեկտրոնային առևտրի մատակարարման շղթայի բոլոր շահագրգիռ կողմերին աջակցող և նրանց կարիքները բավարարող համատեղ լուծումների մշակման ուղղությամբ՝ էլեկտրոնային առևտրի կարգավորման հարցերով շահագրգիռ կողմերի ներգրավմամբ աշխատանքային խմբի միջոցով (WGEC), որի կազմում ընդգրկված են կառավարությունների, մասնավոր հատվածի, միջազգային կազմակերպությունների, էլեկտրոնային առևտրի շահագրգիռ կողմերի և ակադեմիական հաստատությունների ներկայացուցիչներ:

Միջսահմանային էլեկտրոնային առևտրի միջազգային բնույթը պահանջում է ամբողջական և ներդաշնակ մոտեցում: Անհրաժեշտ է, որ կառավարությունները և էլեկտրոնային առևտրի շահագրգիռ կողմերը շարունակեն համագործակցել՝ գործնական, արդար և նորարար լուծումներ մշակելու համար, որոնք կնպաստեն համաշխարհային տնտեսության զարգացմանը՝ միաժամանակ լուծելով մարդկանց ապահովության ու տնտեսության անվտանգության հիմնախնդիրները: Այս մոտեցման անկյունաքարը Ստանդարտների շրջանակի մշակումն էր¹⁴, որում արտացոլված են 2017 թ. դեկտեմբերին Եգիպտոսում ընդունված «Միջսահմանային էլեկտրոնային առևտրի բանաձևի» (Լյուքսորի բանաձև)¹⁵ համաշխարհային միջսահմանային

¹¹ S't'u Declaration on Global Electronic Commerce (Adopted in Geneva on 20 May 1998), WT/MIN(98)/DEC/2, https://www.wto.org/english/tratop_e/ecom_e/ecom_e.htm:

¹² S't'u WTO, General Council Decision (Adopted on 10 December 2019), WT/L/1079 / Work Programme on Electronic Commerce, https://www.wto.org/english/tratop_e/ecom_e/ecom_e.htm:

¹³ S't'u WTO, Work Programme on Electronic Commerce/Adopted by General Council on 30 September 1998), WT/L/274/, https://www.wto.org/english/tratop_e/ecom_e/ecom_e.htm.

¹⁴ S't'u WCO, Cross-Border E-Commerce Framework of Standards /Forewarded by Secretary General of the World Customs Organization/, June 2018, http://www.wcoomd.org/-/media/wco/public/global/pdf/topics/facilitation/activities-and-programmes/ecommerce/wco-framework-of-standards-on-crossborder-ecommerce_en.pdf?db=web:

¹⁵ S't'u Resolution of the Policy Commission of the World Customs Organization on the Guiding

էլեկտրոնային առևտրի կառավարման առանցքային սկզբունքները:

Լյուքսորի բանաձևում ներկայացված են միջսահմանային էլեկտրոնային առևտրի ութ հիմնարար սկզբունքները.

- էլեկտրոնային տվյալների և ռիսկերի կառավարում,
- ընթացակարգերի դյուրացում և պարզեցում,
- ապահովություն և անվտանգություն,
- եկամուտների հավաքագրում,
- չափում և վերլուծություն,
- գործընկերություններ,
- հասարակության իրազեկվածություն, տարածքների և կարողությունների զարգացում,
- օրենսդրական շրջանակներ¹⁶:

Էլեկտրոնային առևտրի կարգավորման ՀՄԿ ստանդարտները թիրախավորվում են հատկապես էլեկտրոնային առևտրի B2C և C2C մոդելների ուղղությամբ, թեև դրանց կիրառումը խրախուսվում է նաև B2B գործարքների դեպքում:

Միջազգային կարգավորման կառուցակարգերից զատ, առանձին երկրների վրա կարող են տարածվել նաև էլեկտրոնային առևտրի տարածաշրջանային կարգավորման գործիքներ, ինչպիսին է, օրինակ, «Ասիա-խաղաղովկիանոսյան տարածաշրջանում միջսահմանային անթուղթ առևտրի ընթացակարգերի պարզեցման մասին շրջանակային համաձայնագիրը» (ESCAP Framework Resulation, 24 մայիսի, 2016 թ.)¹⁷, որը, սակայն, մինչ օրս ուժի մեջ չի մտել՝ բավարար թվով երկրների կողմից վավերացված չլինելու պատճառով: Հայաստանը համաձայնագիրը ստորագրել է 2017 թ. սեպտեմբերի 22-ին, բայց դեռևս չի վավերացրել, իսկ Ադրբեջանը վավերացրել է՝ վերջինիս դրույթները ՀՀ-ի նկատմամբ չկիրառելու վերապահումով¹⁸:

ESCAP շրջանակային համաձայնագիրը նպատակ ունի խթանելու առանց թղթի միջսահմանային առևտուրը՝ էլեկտրոնային առևտրի փաստաթղթերի և տվյալների փոխադարձ ճանաչման ու փոխանակման համար նպաստավոր պայմանների ստեղծմամբ, ինչպես նաև միասնական պատուհանի և/կամ առանց թղթի առևտրային այլ համակարգերի փոխգործունակության ապահովմամբ: ESCAP շրջանակային համաձայնագիրը չի կրկնօրինակում ԱՀԿ համաձայնագրի նորմերը, այլ դրանք լրացնում է իրականացման տեսանկյունից: Եթե ԱՀԿ համաձայնագիրը հիմնականում դիտարկվում է որպես իրավական հարցերի և արտաքին առևտրի գործունեության իրա-

Principles for Cross-Border E-Commerce (Luxor, December 2017), http://www.wcoomd.org/-/media/wco/public/global/pdf/about-us/legal-instruments/resolutions/policy-commission-resolution-on-cross-border-e-commerce_en.pdf?la=en.

¹⁶ Տե՛ս **WCO**, Cross-Border E-Commerce Framework of Standards /Forewarded by Secretary General of the World Customs Organization/, June 2018, էջ 9:

¹⁷ Տե՛ս Экономический и Социальный Совет ООН, Рамочное соглашение об упрощении процедур трансграничной безбумажной торговли в Азиатско-Тихоокеанском регионе (Рамочное соглашение ЭСКАТО), 72/4 /Резолюция, принятая Экономической и социальной комиссией для Азии и Тихого океана от 24 мая 2016г./, E/ESCAP/RES/72/4 (https://www.un.org/ga/search/view_doc.asp?symbol=E/ESCAP/RES/72/4&Lang=R):

¹⁸ https://treaties.un.org/Pages/ViewDetails.aspx?src=TREATY&mtdsg_no=X-20&chapter=10&clang=_en#EndDec.

կանացման վերաբերյալ խոչընդոտները նվազեցնելու կամ վերացնելու գործիք, ապա ESCAP շրջանակային համաձայնագիրը կարող է համարվել անթուղթ տեխնոլոգիաների կիրառմամբ միջսահմանային առևտուրը հեշտացնելու գործիք:

Մեկ այլ «Եվրոպական միությունը թվային օրակարգի համար» (EU4Digital) նախաձեռնության միջոցով ԵՄ-ն աջակցում է առևտրի դյուրացմանն ու ներդաշնակեցմանն ինչպես Արևելյան գործընկերության երկրների միջև, այնպես էլ ԵՄ շրջանակներում՝ խթանելով էլեկտրոնային առևտրի, մաքսային էլեկտրոնային ծառայությունների և էլեկտրոնային լոգիստիկայի ընդհանուր կառուցակարգերի ու թվային տրանսպորտային միջանցքների կիրառումը¹⁹:

Հետազոտության մեթոդաբանություն: Հետազոտության մեթոդաբանական հիմքն է կազմում հետևյալ մեթոդների ամբողջությունը.

- համակարգման մեթոդը, համաձայն որի՝ էլեկտրոնային առևտրի կարգավորման հիմնախնդիրները դիտարկվել են դրանց դիալեկտիկական միասնության տեսանկյունից,
- իրավավերլուծական մեթոդը, որը թույլ է տվել վերլուծել միջսահմանային էլեկտրոնային առևտրի հիմնահարցերը կարգավորող տարբեր իրավական համակարգերի համապատասխան դրույթներն ու դրանց ներդրումն ազգային օրենսդրության մեջ,
- իրավահամեմատական մեթոդը, որը ենթադրում է տարբեր իրավական համակարգերի համադրում՝ էլեկտրոնային առևտրի կարգավորմանն առնչվող ՀՀ օրենսդրության մշակման կամ կատարելագործման նպատակով առաջարկություններ ներկայացնելու համար,
- վիճակագրական մեթոդը, որի շնորհիվ վերլուծության են ենթարկվել առանձին երկրներում և տարածաշրջաններում էլեկտրոնային գործարքները կարգավորող, տվյալների պաշտպանությունն ու գաղտնիությունը երաշխավորող, էլեկտրոնային տիրույթում սպառողների իրավունքների պաշտպանության հարցերը կարգավորող և կիբեռհանցավորության դեմ պայքարին ուղղված՝ գործող օրենսդրության կամ օրենսդրական նախագծերի առկայության վերաբերյալ տվյալները:

Թեմայի ուսումնասիրության համար ելակետային հիմք են հանդիսացել Միավորված ազգերի կազմակերպության Միջազգային առևտրի իրավունքի հանձնաժողովի, Առևտրի համաշխարհային կազմակերպության, Համաշխարհային մաքսային կազմակերպության կողմից էլեկտրոնային առևտրի միջազգային կարգավորման նպատակով ընդունված կոնվենցիաները, համաձայնագրերը, հոչակագրերն ու բանաձևերը, ինչպես նաև դրանց հանդեպ ՀՀ և ԵԱՏՄ երկրների ստանձնած պարտավորությունները: Որպես իրավական և նորմատիվային հիմք են ծառայել ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, հարկային օրենսգիրքը՝ ներառյալ դրանում կատարված թեմատիկ լրացումներն ու փոփոխությունները, էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության, սպառողների իրավունքների պաշտպանության, առևտրի և ծառայությունների ոլորտները կարգավորող օրենքները, ինչպես նաև այլ իրավանորմատիվային փաստաթղթեր:

¹⁹ EU4Digital, <https://eufordigital.eu/hy/thematic-area/etrade/>

Առանձին երկրներում և տարածաշրջաններում էլեկտրոնային առևտրի իրավական կարգավորվածության մակարդակի համեմատության և վերլուծության համար կիրառվել է ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման հանձնաժողովի կիրեռությունների գլոբալ քարտեզագրման գործիքը (UNCTAD Global Cyberlaw Tracker), որը թույլ է տալիս հետևել էլեկտրոնային գործարքների, սպառողների պաշտպանության, տվյալների գաղտնիության պահպանման, ինչպես նաև կիրեռական ցավորության դեմ պայքարին ուղղված օրենսդրության հասանելիությանը ՄԱԿ-ի անդամ 194 երկրներում:

Վերլուծություն: էլեկտրոնային առևտրի կարգավորման շրջանակները կարող են ուղղակի խոչընդոտներ առաջացնել էլեկտրոնային առևտրի համար: Այս տեսանկյունից, իրավական և տնտեսական կարգավորման կառուցակարգերի կատարելագործումը ենթադրում է համակարգված միջոցառումների իրականացում տարբեր ոլորտներում՝ սահմանափակումները վերացնելու և կարգավորման հիմնական շրջանակները սահմանելու տեսանկյունից:

UNCITRAL-ի «էլեկտրոնային առևտրի տիպային օրենքը» (MLEC)²⁰ նպատակ ունի հաղթահարել օրենսդրական դրույթներից բխող խոչընդոտները՝ իրավահավասար վերաբերմունք ապահովելով թղթային և էլեկտրոնային տեղեկատվության նկատմամբ՝ որպես առևտրային գործարքների իրականացումն առանց թղթի հնարավոր դարձնելու անհրաժեշտ նախապայման՝ դրանով իսկ, ի վերջո, խթանելով միջազգային առևտրի արդյունավետությունը:

UNCITRAL-ի «էլեկտրոնային առևտրի տիպային օրենքին» համարժեք կամ դրա առանցքային տարրերը պարունակող օրենքներ են ընդունվել աշխարհի 74 երկրում (այդ թվում՝ ԱՄՆ, Չինաստան, Հնդկաստան, ԻԻՀ, ԱՄԷ և այլն) և, ընդհանուր առմամբ, 153 իրավասություններում (ներառյալ առանձին նահանգներն ու այլ երկրների իրավասության տակ գտնվող տարածքները)²¹: Հատկանշական է, որ ԵՄ անդամ երկրներից էլեկտրոնային առևտրի կարգավորման տիպային օրենքներ ընդունվել են Ֆրանսիայում, Իռլանդիայում և Սլովենիայում՝ 2000 թ., Մալթայում՝ 2002 թ., թեև ենթադրվում է, որ նմանօրինակ օրենքները Եվրամիությունում պետք է ընդունվեին համընդհանուր և միասնական կարգով:

Հայաստանի Հանրապետությունը, ինչպես և ԵԱՏՄ անդամ մյուս երկրները, դեռևս պաշտոնապես ներառված չեն UNCITRAL-ի «էլեկտրոնային առևտրի տիպային օրենքին» համարժեք իրավական փաստաթուղթ ընդունած երկրների ցանկում: Սա, թերևս, հնարավորություն կտա չկրկնելու Եվրամիության «սխալը»՝ ինտեգրացիոն խմբավորման շրջանակներում ի սկզբանե կիրառելով էլեկտրոնային առևտրի իրավական կարգավորման միասնականացված մոտեցում:

UNCITRAL-ի հաջորդ՝ «էլեկտրոնային ստորագրության տիպային օրենքը» (MES)²² կառուցված է այնպիսի հիմնարար սկզբունքների վրա, ինչպի-

²⁰ Տե՛ս UNCITRAL Model Law on Electronic Commerce (Date of adoption: 12 June 1996, additional article 5 bis adopted in 1998),

https://uncitral.un.org/en/texts/ecommerce/modellaw/electronic_commerce:

²¹ Տե՛ս UNCITRAL Model Law on Electronic Commerce – Status,

https://uncitral.un.org/en/texts/ecommerce/modellaw/electronic_commerce/status:

²² Տե՛ս UNCITRAL Model Law on Electronic Signature (Date of adoption: 5 July 2001),

սիք են խտրականության բացառումը, տեխնոլոգիական չեզոքությունը և գործառնական համարժեքությունը: Միջսահմանային էլեկտրոնային առևտրի խթանման տեսանկյունից, MLES-ի ամենից շոշափելի դրույթները, թերևս, կապված են օտարերկրյա հավաստագրերի և էլեկտրոնային ստորագրությունների ճանաչման խրախուսման հետ՝ հիմնվելով բովանդակային համարժեքության սկզբունքի վրա, որն անտեսում է օտարերկրյա ստորագրության ծագման վայրը:

MLES-ի օրինակով, էլեկտրոնային ստորագրության ճանաչելիությունը կարգավորող օրենքներ են ընդունվել 33 երկրում, ներառյալ՝ Չինաստանում, Հնդկաստանում, ԱՄԷ-ում, Մեքսիկայում և այլուր: Դրանց ցանկում ԵՄ և ԵԱՏՄ անդամ երկրներ չկան, թեև թվային ստորագրությունների կիրառմամբ պայմանավորված իրավահարաբերությունները կարգավորող օրենքներ և իրավանորմատիվային փաստաթղթեր կիրառվում են բազմաթիվ երկրներում, այդ թվում՝ ՀՀ-ում:

Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով²³ և «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքով²⁴ սահմանված է նաև էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության²⁵ կիրարկումը, ինչը թույլ է տալիս պայմանագրեր կնքել էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Սակայն, այդ օրենքով, ՀՀ-ում էլեկտրոնային թվային ստորագրությունը կիրառելի է միայն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց միջև փոխգործակցության շրջանակներում, իսկ միջսահմանային առևտրային գործունեության համատեքստում էլեկտրոնային թվային ստորագրության կիրառման հնարավորությունները ՀՀ օրենսդրությամբ չեն կարգավորվում: Դա խոչընդոտ է հանդիսանում միջսահմանային էլեկտրոնային առևտրի համար, սակայն կարող է կիրառելի լինել ներքին էլեկտրոնային առևտրի դեպքում:

Միաժամանակ, ՄԱԿ-ի առևտրի դյուրացման և էլեկտրոնային բիզնեսի կենտրոնի կողմից առաջարկվող «էլեկտրոնային առևտրի ինքնակարգավորման գործիքակազմով» էլեկտրոնային առևտրային հարթակներում էլեկտրոնային ստորագրության կիրառման նկատմամբ նախատեսվում է հետևյալ պայմանների հստակեցումը²⁶.

- կողմերի համար ընդունելի էլեկտրոնային ստորագրության հուսալի ձևեր և տեխնոլոգիաներ,
- կողմերի կողմից կիրառվող էլեկտրոնային ստորագրության հուսալի

[https://uncitral.un.org/en/texts/ecommerce/modellaw/electronic_signatures:](https://uncitral.un.org/en/texts/ecommerce/modellaw/electronic_signatures)

²³ Տե՛ս ՀՀ Քաղաքացիական օրենսգրքը (ՀՕ-239, առ 05.05.1998):

²⁴ Տե՛ս ՀՀ օրենքը «էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային ստորագրության մասին» (ՀՕ-40-Ն, առ 14.10.2004):

²⁵ Որոշակի տարբերություններ գոյություն ունեն էլեկտրոնային և թվային ստորագրությունների միջև: Թվային ստորագրությունը հիմնվում է բացառապես կրիպտոգրաֆիկ տեխնոլոգիաների վրա, ինչը ենթադրում է ծածկագրման և անվտանգության երաշխիքների ապահովում, քանի որ նման եղանակով ստորագրված փաստաթուղթն այլևս չի կարող փոփոխության ենթարկվել, մինչդեռ էլեկտրոնային ստորագրություն կարող է համարվել թղթի վրա դրված ստորագրության նկարը, որը հեշտությամբ հնարավոր է կեղծել:

²⁶ Տե՛ս UNECE, UN/ CEFAC, UNECE Recommendation No.32 on E-Commerce Self-Regulatory Instruments (Codes of Conduct), 2001, TRADE/CEFAC/2001/14, էջ 13, http://www.unece.org/fileadmin/DAM/cefact/recommendations/rec32/rec32_ecetrd277.pdf.

ձևեր և տեխնոլոգիաներ,

- էլեկտրոնային ստորագրության վավերացում,
- երրորդ անձանց նկատմամբ պարտադրվող որակի չափանիշներ,
- պատասխանատվություն էլեկտրոնային ստորագրության գաղտնիության համար:

ՀՀ Կառավարության 2008 թ. հունվարի 25-ի N 116-Ն որոշմամբ²⁷ էլեկտրոնային թվային ստորագրության նկատմամբ ՀՀ-ում կիրառելի են հետևյալ ալգորիթմների ստանդարտները.

- առնվազն 1024 բիտ երկարությամբ բանալի ունեցող, դիսկրետ լոգարիթմների վրա հիմնված ալգորիթմներ,
- առնվազն 512 բիտ երկարությամբ բանալի ունեցող, էլիպտիկ կորերի վրա հիմնված ալգորիթմներ:

Համանման բնութագրիչներով է բնորոշվում նաև թվային ստորագրությունների DSS (Digital Signature Standard) ամերիկյան ստանդարտը:

UNCITRAL-ի վերջին՝ «էլեկտրոնային փոխանցելի գրառումների մասին տիպային օրենքը» (MLETR)²⁸ փոխանցելի փաստաթղթերը և գործիքները դիտարկում է որպես առևտրի կարևոր բաղկացուցիչներ: Դրանց հասանելիությունն էլեկտրոնային ձևով կարող է շատ օգտակար լինել էլեկտրոնային առևտրի դյուրացման տեսանկյունից, քանի որ փոխանցման արագության և անվտանգության բարելավումը, տվյալների օգտագործման թույլտվությունը և «խելացի պայմանագրերի» կիրառությունն ավտոմատացնում են որոշակի գործարքներ: Ավելին, էլեկտրոնային փոխանցելի գրառումներն անթուղթ առևտրային (տրանսպորտային, լոգիստիկ և ֆինանսական) միջավայրի հիմնական բաղադրիչներն են, ինչը կարող է կարևոր ներդրում ունենալ առևտրի դյուրացման գործում:

էլեկտրոնային առևտրի՝ որպես համաշխարհային միջսահմանային առևտրի դրսևորման ձևի նկատմամբ կիրառելի են նաև «Առևտրի ընթացակարգերի պարզեցման մասին» ԱՀԿ համաձայնագրի (Trade Facilitation Agreement-TFA, 2013) դրույթները: Համաձայնագիրը նախատեսում է էլեկտրոնային փաստաթղթերի համարժեք կիրառում մաքսային ձևակերպումների ընթացքում, ինչպես նաև արտահանման և ներմուծման հարկերի էլեկտրոնային վճարումներ: Հայաստանի Հանրապետությունը համաձայնագրին միացել է 2017 թ. մարտի 20-ին²⁹:

ՀՀ-ի կողմից 2013 թ. վավերացված ՀՄԿ «Մաքսային ընթացակարգերի պարզեցման և ներդաշնակեցման մասին» Կիոտոյի վերանայված կոնվենցիան նախատեսում է էլեկտրոնային առևտրի կարգավորման վերաբերյալ դրույթներ: Մասնավորապես, կոնվենցիայի 6.9 ստանդարտը մաքսային մարմիններին օժտում է տեղեկատվական տեխնոլոգիաների և էլեկտրոնա-

²⁷ Տե՛ս ՀՀ Կառավարության 2008 թ. հունվարի 25-ի՝ «էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրման կենտրոնների հավատարմագրման համար դրանց կողմից մատուցվող ծառայություններին առաջադրվող տեխնիկական չափանիշները հաստատելու մասին» N116-Ն որոշումը:

²⁸ Տե՛ս UNCITRAL Model Law on Electronic Transferable Records (Date of adoption: 13 July 2017), https://uncitral.un.org/en/texts/ecommerce/modellaw/electronic_transferable_records:

²⁹ Տե՛ս WTO, Trade Facilitation Agreement / Members Accepting the Protocol of Amendment to Insert the WTO Trade Facilitation Agreement into Annex 1A of the WTO Agreement, https://www.wto.org/english/tratop_e/tradfa_e/tradfa_agreeacc_e.htm:

յին առևտրի հնարավորություններն ի նպաստ մաքսային հսկողության ուժեղացման օգտագործելու իրավասությանը, իսկ 7.4 ստանդարտը պահանջում է, որպեսզի անդամ երկրների նոր կամ վերանայված ազգային օրենսդրությունները նախատեսեն հետևյալ հնարավորությունները.

- էլեկտրոնային առևտրի մեթոդների կիրառումը որպես այլընտրանք՝ թղթի վրա հիմնված փաստաթղթաշրջանառության պահանջներին,
- էլեկտրոնային, ինչպես նաև թղթային վավերացման մեթոդների հստակեցում,
- մաքսային մարմինների կողմից սեփական օգտագործման համար տեղեկություն պահելու և սահմանված կարգով էլեկտրոնային առևտրի տեխնիկայի միջոցով այդպիսի տեղեկությունը մաքսային այլ ստորաբաժանումների և մյուս բոլոր օրինականորեն հաստատված կողմերի հետ փոխանակելու իրավունքի նախատեսում³⁰:

Միաժամանակ, ԵԱՏՄ-ն որդեգրել է թվային օրակարգ, որի նպատակը միջազգային փորձի հիման վրա թվային զարգացման տնտեսական արդյունքն առավելագույնի հասցնելն է: ԵԱՏՄ թվային օրակարգի առաջնահերթությունների շարքում են ոլորտը կարգավորող իրավական դաշտի մշակումը և ԵԱՏՄ անդամ պետությունների օրենքների ներդաշնակեցումը, էլեկտրոնային առևտրի ներդրման միջոցով փոխադարձ առևտրաշրջանառության մեծացման նպատակով միասնական թվային տարածքի ձևավորումը³¹ և այլն:

Այսպիսով, պետք է փաստել, որ անդամակցությունը միջազգային կազմակերպություններին և ինտեգրացիոն միավորումներին, ինչպես նաև դրանց հանդեպ ստանձնած պարտավորություններն ուրվագծում են առանձին երկրներում էլեկտրոնային առևտրի կարգավորման իրավական շրջանակը:

ՄԱԿ-ի Առևտրի և տնտեսական զարգացման համաժողովը (UNCTAD) էլեկտրոնային առևտրի իրավական կարգավորման մակարդակն առանձին երկրներում և տարածաշրջաններում բնորոշում է ըստ հետևյալ չորս ուղղությունների՝ *էլեկտրոնային գործարքները կարգավորող օրենսդրություն, տրվյալների պաշտպանությունն ու գաղտնիությունը երաշխավորող օրենսդրություն, էլեկտրոնային տիրույթում սպառողների իրավունքների պաշտպանության հարցերը կարգավորող օրենսդրություն և կիրեռանվարանգության ապահովմանն ուղղված օրենսդրություն* (աղյուսակ 1):

Ընդհանրապես, էլեկտրոնային գործարքների՝ որպես թղթային հիմքով համօրինակների իրավական համարժեքությունը ճանաչող օրենքներն առցանց առևտրային գործառնությունների իրականացման հիմնական նախադրյալներն են: Համանման օրենքներ ընդունվել են աշխարհի 158 երկրում կամ դիտարկվող երկրների 81%-ի դեպքում:

³⁰ Տե՛ս WCO, International Convention on the Simplification and Harmonization of Customs Procedures, Kyoto, Revised version (RKC), Entered into force 03.02.2006, (http://www.wcoomd.org/en/topics/facilitation/instrument-and-tools/conventions/pf_revised_kyoto_conv/kyoto_new.aspx):

³¹ Տե՛ս Цифровая повестка Евразийского экономического союза до 2025 года: перспективы и рекомендации, http://www.eurasiancommission.org/ru/act/dmi/SiteAssets/%D0%9E%D0%B1%D0%B7%D0%BE%D1%80%20%D0%92%D0%91.pdf?fbclid=IwAR17h4The9jJR1yXITb7iS7za1-o8SI3PAACZBqpYrB_02pDKHIKIPQSWVrc:

**Էլեկտրոնային առևտրի իրավական կարգավորվածությունը՝
ըստ տարածաշրջանների³²**

Տարածաշրջան/ երկիր	Էլեկտրոնային գործարքները կարգավորող օրենքներ	Տվյալների պաշտպանու- թյունն ու գաղտ- նիությունն ապա- հովող օրենքներ	Սպառողների պաշտպանու- թյան վերաբերյալ օրենքներ	Կիբեռհանցավ որության դեմ պայքարին ուղղված օրենքներ
Իրավիճակն առանձին տարածաշրջաններում				
Աֆրիկա (54 երկիր)	61% (33 երկիր)	50% (27 երկիր)	46% (25 երկիր)	72% (39 երկիր)
Ամերիկա (35 երկիր)	91% (32 երկիր)	69% (24 երկիր)	71% (25 երկիր)	83% (29 երկիր)
Ասիա-խաղաղ- օվկիանոսյան տարածաշրջան (60 երկիր)	82% (49 երկիր)	57% (34 երկիր)	43% (26 երկիր)	77% (46 երկիր)
Եվրոպա (45 երկիր)	98% (44 երկիր)	96% (43 երկիր)	73% (33 երկիր)	89% (40 երկիր)
Աշխարհ (UNCTAD անդամ 194 երկիր)	81% (158 երկիր)	66% (132 երկիր)	56% (110 երկիր)	79% (154 երկիր)
Իրավիճակը տնտեսապես խոցելի երկրներում				
Թույլ զարգացած երկրներ (LDCs, 47 երկիր)	64% (30 երկիր)	43% (20 երկիր)	40% (19 երկիր)	66% (31 երկիր)
Զարգացող փոքր կղզի երկրներ (SIDC, 29 երկիր)	62% (18 երկիր)	34% (10 երկիր)	24% (7 երկիր)	62% (18 երկիր)

Առցանց հարթակներում, սոցիալական և տնտեսական գործունեության ակտիվացմանը զուգընթաց, առաջին պլան են մղվում անհատական տվյալների պաշտպանվածությունն ու գաղտնիությունը, առանց օգտատերերի թույլատրության դրանք երրորդ անձանց հասանելի դարձնելու անհնարինությունը: Տվյալների գաղտնիության ապահովման վերաբերյալ օրենքներ են ընդունվել 132 երկրում, որոնք կազմում են UNCTAD-ի անդամ երկրների 66%-ը, իսկ 10%-ի դեպքում արդեն առկա են օրենքի նախագծեր:

Անկախ էլեկտրոնային առևտրում սպառողների պաշտպանվածության կարևորությունից՝ դեռևս շատ զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներում սպառողների իրավունքներն առցանց հարթակներում պատշաճ ձևով պաշտպանված չեն: Նման օրենքներ դեռևս ընդունվել են աշխարհի 110 երկրում (56%):

Ի հակադրություն վերջինիս՝ կիբեռհանցավորության դեմ պայքարի՝ իրավական դաշտ տեղափոխմանն առավել մեծ նշանակություն է տրվում աշխարհի 154 երկրում (79%):

Աղյուսակ 1-ում ներկայացված տվյալների ուսումնասիրությունը ցույց է

³² Տե՛ս UNCTAD, Summary of Adoption of E-Commerce Legislation Worldwide (Retrieved on 31.07.2020), https://unctad.org/en/Pages/DTL/STI_and ICTs/ICT4D-Legislation/eCom-Global-Legislation.aspx:

տալիս, որ էլեկտրոնային առևտրի իրավական կարգավորվածության մակարդակն առավել բարձր է հատկապես Եվրոպայում և Ամերիկայում, որոնց հաջորդում է Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանը, իսկ իրավական կարգավորման ամենացածր մակարդակը դիտվում է Աֆրիկայում: Աղյուսակում առանձնացված են նաև տնտեսապես խոցելի երկրները, ինչպիսիք են թույլ զարգացած և փոքր կղզիների վրա տեղակայված զարգացող երկրները, որտեղ էլեկտրոնային առևտրի իրավական կարգավորման մեխանիզմները դեռևս սահմանափակ են:

Հատկանշական է, որ էլեկտրոնային առևտրի իրավական կարգավորման բոլոր չորս բաղադրիչներից երկրների մեծամասնության կողմից հարաբերականորեն անտեսված են էլեկտրոնային միջավայրում սպառողների պաշտպանության վերաբերյալ օրենքները: Այս առումով բացառություն չեն նաև ԵԱՏՄ անդամ երկրները (աղյուսակ 2), որտեղ էլեկտրոնային միջավայրում սպառողների պաշտպանության խնդիրներն օրենսդրական կարգավորում են ստացել առայժմ միայն Բելառուսում, թեև Ղրղզստանում և Ռուսաստանում առկա են համապատասխան օրենքների նախագծեր:

Աղյուսակ 2

Էլեկտրոնային առևտրի իրավական կարգավորման մակարդակը ԵԱՏՄ երկրներում³³

ԵԱՏՄ երկիր	Էլեկտրոնային գործարքները կարգավորող օրենքներ	Տվյալների պաշտպանություն ու գաղտնիությունն ապահովող օրենքներ	Սպառողների պաշտպանության վերաբերյալ օրենքներ	Կիրեռահանցավորության դեմ պայքարին ուղղված օրենքներ
Հայաստան	✓	✓	-	✓
Բելառուս	✓	✓	✓	-
Ղազախստան	✓	✓	-	✓
Ղրղզստան	✓	✓	առկա է նախագիծ	✓
Ռուսաստանի Դաշնություն	✓	առկա է նախագիծ	առկա է նախագիծ	-

Միաժամանակ, կարող ենք փաստել, որ էլեկտրոնային առևտրի իրավական կարգավորման տեսանկյունից ԵԱՏՄ երկրներից համեմատաբար շահեկան վիճակում են գտնվում Հայաստանը, Բելառուսը և Ղազախստանը, որտեղ վերոնշյալ չորս բաղադրիչներից առկա չէ միայն մեկը. էլեկտրոնային սպառողների պաշտպանության օրենքը՝ Հայաստանում ու Ղազախստանում, կիրեռահանցավորության դեմ պայքարի իրավական կարգավորումը՝ Բելառուսում: Ռուսաստանը էլեկտրոնային առևտրի իրավական կարգավորման մակարդակով զիջում է ԵԱՏՄ բոլոր երկրներին:

Այդուհանդերձ, «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում 2016 թ. կատարված լրացումներով³⁴ նախատեսվել են

³³ Տե՛ս UNCTAD, Summary of Adoption of E-Commerce Legislation Worldwide (Retrieved on 31.07.2020), https://unctad.org/en/Pages/DTL/STI_and ICTs/ICT4D-Legislation/eCom-Global-Legislation.aspx:

³⁴ Տե՛ս ՀՀ օրենքը «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին (ՀՕ-118Ն, ընդունված 17.06.2016):

էլեկտրոնային առևտրին առնչվող որոշ դրույթներ, մասնավորապես՝ հստակեցվել է էլեկտրոնային պայմանագիր կնքելու հնարավորություն ընձեռող ինտերնետային կայքում և (կամ) էլեկտրոնային հավելվածում (էլեկտրոնային առևտրային հարթակում) հրապարակման ենթակա տեղեկատվությունը (հոդված 10.1), ներառյալ՝ վաճառողի կոնտակտային տվյալները, պայմանագրի դրույթները, ապրանքների կամ ծառայությունների դիմաց վճարման ենթակա ընդհանուր գումարը, որում պետք է ներառվեն և արտացոլվեն դրանց վաճառքի գինը, բոլոր հարկերը, առաքման և այլ ծախսերը (առկայության դեպքում), վճարման ձևը, ապրանքը վերադարձնելու կամ փոխանակելու սպառողի իրավունքը, բողոքների քննության և վեճերի լուծման արտադատական կարգը և այլն: Եվ որ առավել սկզբունքային է էլեկտրոնային առևտրի դիտակետից, օրենքի շրջանակում սպառողի կողմից էլեկտրոնային ձևով լրացվող տվյալների ամբողջությունը «համարվում է ձեռագիր ստորագրությանը համարժեք և հնարավորություն է ընձեռում նույնականացնելու էլեկտրոնային ձևով ստորագրող անձին ու արտահայտում է վերջինիս կամքը»³⁵:

Փաստացիորեն, էլեկտրոնային առևտրային հարթակներում սպառողների իրավունքների պաշտպանության որոշ առանցքային դրույթներ արդեն իսկ ամրագրված են օրենսդրորեն, սակայն, հավանաբար, այդ մասին դեռևս պատշաճ ծանուցում չի ներկայացվել UNCTAD-ին:

Էլեկտրոնային առևտրի վերաբերյալ որոշ դրույթներ հանդիպում են նաև ՀՀ այլ իրավաօրենսդրական ակտերում: Մասնավորապես.

- ՀՀ-ում դեռևս 2013 թ. հաստատվել է «էլեկտրոնային առևտրի զարգացման, ցանցային պատրաստվածության և տեխնիկական հագեցվածության ծրագիրը»³⁶, որի հիմնական նպատակը էլեկտրոնային առևտրի ոլորտում պետական քաղաքականության հիմնական սկզբունքների մշակումն է:
- «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ մանրածախ առևտուրը կարող է իրականացվել էլեկտրոնային կապի միջոցներով³⁷:
- ՀՀ հարկային օրենսգրքի 380-րդ հոդվածը հստակեցնում է «ՀԴԱ կտրոնների կիրառության ոլորտները»: Օրենքի այս դրույթը սահմանում է նաև, որ հեռակա՝ էլեկտրոնային հաղորդակցություն ապահովող կապի միջոցով վաճառքի իրականացման դեպքում հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը պարտադիր չէ, ինչը որոշակիորեն հակասում է էլեկտրոնային ՀԴԱ-ների կիրառման վերաբերյալ վերջերս ուժի մեջ մտած հարկային փոփոխություններին:

Այսպես, 2020 թ. հունիսի 1-ի ՀՕ-280-Ն օրենքով ՀՀ հարկային օրենսգրքում ամրագրվել է էլեկտրոնային ՀԴԱ կտրոնի վերաբերյալ փոփոխությունը և սահմանվել է, որ կազմակերպությունների ու անհատ ձեռնարկատերերի կողմից ինտերնետային կայքի կամ էլեկտրոնային հավելվածի (էլեկտրո-

³⁵ ՀՀ օրենքը «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին (ՀՕ-118Ն, ընդունված 17.06.2016):

³⁶ «ՀՀ-ում էլեկտրոնային առևտրի զարգացման, ցանցային պատրաստվածության և տեխնիկական հագեցվածության ծրագիր» (ՀՀ Կառավարության 2013 թ. սեպտեմբերի 19-ի նիստի N 37 արձանագրային որոշման հավելված N 1):

³⁷ ՀՀ օրենքը «Առևտրի և ծառայությունների մասին» (ՀՕ-134-Ն, առ 24.11.2004):

նային առևտրային հարթակի) միջոցով ընդունվող պատվերների շրջանակներում ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման կամ աշխատանքների կատարման գործարքների մասով կարող է կիրառվել էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենա, որի միջոցով կարելի է գեներացնել էլեկտրոնային կտրոն³⁸: Ճիշտ է, այդպիսով օրենսդրորեն ամրագրվել են էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության և էլեկտրոնային կտրոնների տպագրման (գեներացման) հնարավորությունները, սակայն դեռևս բավարար չեն դրանց գործարկումը լիարժեքորեն իրականացնելու համար: Մասնավորապես, դեռևս հստակեցված չեն այլ իրավաօրենսդրական փաստաթղթերին առնչվող կապերը, միաժամանակ, օրենքում առկա են որոշակի բացթողումներ.

1. ՀՕ-280-Ն օրենքում սահմանվում է, որ «ապրանքների մատակարարման դեպքում հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնները պետք է տպագրվեն (գեներացվեն) մինչև մատակարարվող ապրանքների՝ առաքման վայրից կամ առաքման կետից դուրս բերելը», սակայն գործնականում հնարավոր են իրավիճակներ, երբ առաքվող ապրանքները պատվիրատուի կողմից չընդունվեն և վերադարձվեն: Նմանօրինակ դեպքերի համար նախապես տպագրված էլեկտրոնային ՀԴՄ կտրոնի չեղարկման հնարավորություն օրենքում նախատեսված չէ:
2. «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով նախատեսվում է 14-օրյա ժամկետում ապրանքի փոխանակման կամ հետ վերադարձի հնարավորություն, որն, ըստ երևույթին, կիրառելի է նաև էլեկտրոնային առևտրի նկատմամբ: Սակայն հարկային փոփոխություններում հստակեցված չէ նման դեպքերում գեներացված էլեկտրոնային ՀԴՄ կտրոնների հարցը:
3. Օրենքի 380.1 հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ «էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենաների տեխնիկական պահանջները, դրանց հաշվառման, հաշվառումից հանման, դրանց միջոցով տրամադրվող էլեկտրոնային կտրոնի պարտադիր վավերապայմաններին ներկայացվող, ինչպես նաև ինտերնետային կայքին կամ էլեկտրոնային հավելվածին (էլեկտրոնային առևտրային հարթակին) ներկայացվող պահանջները սահմանում է կառավարությունը»: Այս մասով որոշակի հակասություն է առաջանում «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» 2016 թ. փոփոխված ՀՀ օրենքի³⁹ հետ, որի 10.1 հոդվածում հստակեցված է ինտերնետային կայքում և (կամ) էլեկտրոնային հավելվածում (էլեկտրոնային առևտրային հարթակում) հրապարակման ենթակա տեղեկատվությունը: Եվ քանի որ օրենքը կառավարության որոշման նկատմամբ ունի գերակա ուժ, ապա կառավարություն էլեկտրոնային առևտրային հարթակում հրապարակման ենթակա տեղեկատվության նկատմամբ իրավասու չի լինի սահմանելու «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ

³⁸ ՀՀ օրենքը «ՀՀ հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» (ՀՕ-280-Ն, առ 01.06.2020):

³⁹ Տե՛ս ՀՀ օրենքը «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» (ՀՕ-118-Ն, առ 17.06.2016):

օրենքի դրույթներից տարբերվող պահանջներ: Ուստի, անհրաժեշտ է իրականացնել համապատասխան հստակեցումներ:

Հայաստանում էլեկտրոնային առևտրի կարգավորումը միջազգային զարգացումներին համահունչ և դրանց համատեքստում դիտարկելու կարևորության գիտակցումը բարձր է պետական կառավարման շահագրգիռ օղակներում: Դրա վառ վկայությունն է 2019 թ. դեկտեմբերի 12-ին ՀՀ Կառավարության որոշմամբ հաստատված «ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2020-2024 թթ. զարգացման և վարչարարության բարելավման ռազմավարական ծրագիրը»⁴⁰, որի առաջնահերթություններից են ինչպես ԵԱՏՄ-ում, այնպես էլ ԵՄ արևելյան գործընկերության շրջանակներում ՀՀ-ի և ԵՄ-ի միջև էլեկտրոնային ուղեկցող փաստաթղթերի փոխադարձ ճանաչմանն ուղղված գործընթացների իրագործումը, փոստային առաքանիների հաշվառման համակարգը ռիսկերի կառավարման ավտոմատացված համակարգին և Միջազգային փոստային միության համակարգին (International Postal System/ Customs Declaration System) ինտեգրումը, ԵԱՏՄ շրջանակներում ապրանքների հետազօծելիության ապահովման մեխանիզմի ներդրումը՝ ԵԱՏՄ հարթակում ստանձնած պարտավորություններին համապատասխան:

Եզրակացություններ: Փաստացիորեն, էլեկտրոնային առևտրի միջազգային կարգավորումն այժմ ակտիվորեն իրականացվում է միաժամանակ մի խումբ կառույցների կողմից՝ ընդգրկելով հիմնականում միմյանց փոխլրացնող կառուցակարգեր: Սակայն նման բազմազանությունը կարող է ի հայտ բերել նաև հակասական դրսևորումներ: Այսպես, օրինակ, Հայաստանի Հանրապետությունը, հանդիսանալով ԵԱՏՄ անդամ, միաժամանակ անդամակցում է տարբեր միջազգային կառույցների, ստորագրել և վավերացրել է ոլորտը կարգավորող մի շարք կոնվենցիաներ ու համաձայնագրեր, որոնց շրջանակը հաճախ չի համընկնում ԵԱՏՄ անդամ մյուս երկրների միջազգային պարտավորությունների հետ՝ խոչընդոտելով անդամ երկրներում էլեկտրոնային առևտրի կարգավորման գործիքակազմի միասնականացման և ներդաշնակեցման գործընթացը: Այս տեսանկյունից, չափազանց կարևոր է երկրների միջև փոխգործակցության ապահովումը:

Գնահատելով «էլեկտրոնային առևտրի մասին» UNCITRAL-ի տիպային օրենքի սկզբունքների համապատասխանությունն ազգային օրենսդրության դրույթների պահանջներին՝ նշենք, որ ԵԱՏՄ անդամ երկրների, այդ թվում՝ Հայաստանի առանձին օրենքներում և/կամ օրենսդրական ակտերում ամրագրված են էլեկտրոնային առևտրի հիմնական սկզբունքները, էլեկտրոնային ստորագրված փաստաթղթերն ունեն նույն իրավական ուժը, ինչ թղթային տարբերակով ստորագրվածները (միայն թղթային համօրինակների առկայության դեպքում): Այնուամենայնիվ, էլեկտրոնային առևտրի իրավական կարգավորումը կրում է հատվածական բնույթ. ՀՀ և ԵԱՏՄ անդամ երկրների օրենսդրությունը (բացառությամբ Ղազախստանի) էլեկտրոնային առևտրի կարգավորումը չի դիտարկում որպես միասնական գործընթաց: Բացի դրանից, դեռևս բացակայում է էլեկտրոնային առևտրի իրավական կարգավոր-

⁴⁰ Տե՛ս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2020-2024 թթ. զարգացման և վարչարարության բարելավման ռազմավարական ծրագիր, Եր., 2019 (ՀՀ Կառավարության 2019 թ. դեկտեմբերի 12-ի N 1850-Լ որոշման հավելված):

րունը երրորդ երկրների հետ առևտրում:

ԵԱՏՄ անդամ երկրների իրավասու մարմինների կողմից օրենսդրական մակարդակում փոխադարձաբար չեն ճանաչվում էլեկտրոնային հաշիվ-ապրանքագրերը, ինչը կապված է ինչպես ԵԱՏՄ, այնպես էլ երրորդ երկրների հետ էլեկտրոնային թվային ստորագրության փոխադարձ ճանաչման բացակայության հետ: Ուստի, անհրաժեշտ է իրավական տեսանկյունից ամրագրել էլեկտրոնային փաստաթղթերի վավերությունն արտաքին առևտրային էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության մեջ:

Մաքսային կամ հարկային օրենքները պետք է ներառեն բնույթով թվային կամ թվայնորեն վաճառվող ապրանքների վերաբերյալ սահմանումներ և կարգավորումներ, ինչպես նաև դիտարկեն թվային ապրանքի հարկմանն առնչվող հարցեր: Արդեն ստեղծվել են գլոբալ ստանդարտներ, ինչպիսիք են UNCITRAL-ի «էլեկտրոնային առևտրի մասին» տիպային օրենքը (MLEC) և ՄԱԿ-ի «Միջազգային պայմանագրերում էլեկտրոնային հաղորդակցությունների օգտագործման մասին» կոնվենցիան (ECC), որոնք հնարավորություն են տալիս կանոնակարգելու և դյուրացնելու էլեկտրոնային եղանակով իրականացվող առևտուրը՝ ազգային օրենսդիրներին տրամադրելով մի շարք միջազգային ընդունելի կանոններ՝ ուղղված իրավական խոչընդոտների վերացմանը և էլեկտրոնային առևտրի ու կապի համար իրավական կանխատեսելիության բարձրացմանը:

Այս տեսանկյունից, անհրաժեշտ է ձեռնարկել հետևյալ քայլերը.

- մշակել «էլեկտրոնային առևտուր» եզրույթի սահմանում՝ հաշվի առնելով հարկային, մաքսային, վիճակագրական և այլ շահագրգիռ մարմինների դիրքորոշումները երկուսի և դրա ընդգրկման շրջանակի վերաբերյալ: Բացի դրանից, պետք է օրենսդրորեն ամրագրել էլեկտրոնային առևտրի իրավական կարգավորման հիմնական սկզբունքները, միջազգային համաձայնագրերով ՀՀ ստանձնած պարտավորությունները, էլեկտրոնային առևտրային գործարքների իրականացման կարգը, էլեկտրոնային գործարքների փաստաթղթավորման հիմնական ձևերը և պահանջները, էլեկտրոնային առևտրի մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները, «միջազգային էլեկտրոնային գործարքներ» հասկացությունը, օրենքի խախտման դեպքում պատասխանատվությունը և այլն:
- Օրենսդրորեն դասակարգել թվային ապրանքները՝ ըստ ապրանքների և ծառայությունների:
- Օրենսդրական մակարդակում ամրագրել, թե թվային տեխնոլոգիաների կիրառմամբ որ պահն է համարվում վաճառքի պահ. վճարման պահը, ապրանքի փոխանցման փաստը, թե՞ գնորդի կողմից պատվերի հաստատումը:
- Անցում կատարել արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների և պետական մարմինների միջև էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությանը ոչ միայն ազգային մակարդակում, այլ նաև ԵԱՏՄ անդամ, ապա երրորդ երկրների միջև:
- Օրենսդրորեն ամրագրել արտաքին առևտրային պայմանագրի կնքման, տրանսպորտային բեռնագրերի, հաշիվ-ապրանքագրերի, այլ ուղեկցող փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակով կազմման

կարգն ու պահանջները: Սա ոչ միայն կոյուրացնի բիզնեսի վարումը, այլև պետական կառավարման մարմիններին հնարավորություն կտա վերահսկելու տրամադրվող տեղեկությունը, կոյուրացնի անուղղակի հարկերի հաշվարկման և գանձման կարգը, դրանց վճարումը, ապրանքների մակնշումը, տեղաշարժին հետևելու հնարավորությունները և այլն:

Վերոնշյալ գործողությունների արդյունքում հնարավոր կլինի մշակել վերագրային էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության կազմակերպչական և օրենսդրական հիմքերը:

Օգտագործված գրականություն

1. «ՀՀ-ում էլեկտրոնային առևտրի զարգացման, ցանցային պատրաստվածության և տեխնիկական հագեցվածության ծրագիր» (ՀՀ Կառավարության 2013 թ. սեպտեմբերի 19-ի նիստի N37 արձանագրային որոշման հավելված N 1):
2. ՀՀ Կառավարության 2008 թ. հունվարի 25-ի «էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրման կենտրոնների հավատարմագրման համար դրանց կողմից մատուցվող ծառայություններին առաջադրվող տեխնիկական չափանիշները հաստատելու մասին» N116-Ն որոշում:
3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2020-2024 թթ. զարգացման և վարչարարության բարելավման ռազմավարական ծրագիր, Եր., 2019 (ՀՀ Կառավարության 2019 թ. դեկտեմբերի 12-ի N1850-Լ որոշման հավելված):
4. ՀՀ օրենքը ««Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» (ՀՕ-118-Ն, առ 17.06.2016):
5. ՀՀ օրենքը «Առևտրի և ծառայությունների մասին» (ՀՕ-134-Ն, առ 24.11.2004):
6. ՀՀ օրենքը «էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային ստորագրության մասին» (ՀՕ-40-Ն, առ 14.10.2004):
7. ՀՀ օրենքը «ՀՀ հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» (ՀՕ-280-Ն, առ 01.06.2020):
8. Ганжа К.П., Правовое регулирование электронной коммерции в России//Современные научные исследования и инновации. 2013, N 10, <http://web.snauka.ru/issues/2013/10 /27833>.
9. Еманова Н.С., Роль международных организаций в развитии электронной торговли//Вестник ЮУрГУ. Серия «Право», 2014, том 14, N3.
10. Цифровая повестка Евразийского экономического союза до 2025 года: перспективы и рекомендации.
11. Экономический и Социальный Совет ООН, Рамочное соглашение об упрощении процедур трансграничной безбумажной торговли в Азиатско-Тихоокеанском регионе (Рамочное соглашение ЭСКАТО), 72/4 /Резолюция, принятая Экономической и социальной комиссией для Азии и Тихого океана от 24 мая 2016г./, E/ESCAP/RES/72/4.
12. Declaration on Global Electronic Commerce (Adopted in Geneva on 20 May 1998), WT/MIN(98)/DEC/2.

13. Resolution of the Policy Commission of the World Customs organization on the Guiding Principles for Cross-Border E-Commerce (Luxor, December 2017).
14. UNCITRAL Model Law on Electronic Commerce (Date of adoption: 12 June 1996, additional article 5 bis adopted in 1998).
15. UNCITRAL Model Law on Electronic Signature (Date of adoption: 5 July 2001).
16. UNCITRAL Model Law on Electronic Transferable Records (Date of adoption: 13 July 2017).
17. UNCITRAL Recommendations to Governments and International Organizations Concerning the Legal Value of Computer Records (1985).
18. UNCTAD Summary of Adoption of E-Commerce Legislation Worldwide, https://unctad.org/en/Pages/DTL/STI_and_ICTs/ICT4D-Legislation/eCom-Global-Legislation.aspx (Retrieved on 31.07.2020).
19. UNECE, UN/ CEFAC, UNECE Recommendation No.32 on E-Commerce Self-Regulatory Instruments (Codes of Conduct), 2001, TRADE/CEFACT/2001/14.
20. UN ESCAP, Embracing the E-commerce Revolution in Asia and the Pacific, June 2018.
21. United Nations Convention on the Use of Electronic Communications in International Contracts (New York, Date of adoption: 23 November 2005, Entry into force: 1 March 2013).
22. WCO, Cross-Border E-Commerce Framework of Standards /Forewarded by Secretary General of the World Customs Organization/, June 2018.
23. WCO, International Convention on the Simplification and Harmonization of Customs Procedures, Kyoto, Revised version (RKC), Entered into force 03.02.2006.
24. WTO, General Council Decision (Adopted on 10 December 2019), WT/L/1079 / Work Programme on Electronic Commerce.
25. WTO, Trade Facilitation Agreement/Members accepting the Protocol of Amendment to insert the WTO Trade Facilitation Agreement into Annex 1A of the WTO Agreement.
26. WTO, Work Programme on Electronic Commerce /Adopted by General Council on 30 September 1998), WT/L/274/.
27. WTO, World Trade Report 2018: The Future of World Trade: How Digital Technologies are Transforming Global Commerce, Geneva.
28. EU4Digital, <https://eufordigital.eu/hy/thematic-area/etrade/>
29. <https://treaties.un.org/>

АННА ПАХЛЯН

*Доцент кафедры международных экономических отношений АГЭУ,
кандидат экономических наук*

СУСАННА АГАДЖАНЫАН

*Ассистент кафедры международных экономических отношений АГЭУ,
кандидат экономических наук*

КАРМЕН ГРИГОРЯН

*Ассистент кафедры международных экономических отношений АГЭУ,
кандидат экономических наук*

ЦОВАК ВОСКАНЯН

Аспирант кафедры международных экономических отношений АГЭУ,

ТИГРАН ГАЛАЯН

Магистр специальности “Прикладная статистика и наука о данных” АГЭУ

Республика Армения в контексте международного регулирования электронной торговли. – Институциональные преобразования, связанные с электронной коммерцией, достигли глубоких основ экономических отношений, поскольку традиционные институты электронной коммерции заменяются институтами электронных инноваций. С этой точки зрения развитие электронной коммерции необходимо для создания соответствующей инфраструктуры и операционной среды, которые обеспечат равный доступ для всех участников рынка к глобальному электронному рынку.

Создание полноценной правовой базы является предварительным условием для развития электронной коммерции, что подразумевает упрощение процедур электронных транзакций и устранение барьеров для выхода на рынок. Чтобы обеспечить благоприятную правовую базу, необходимо провести законодательные реформы как для регулирования электронной торговли товарами и услугами, так и в ряде смежных областей, таких как использование систем электронных платежей, логистика, продвижение цепочек поставок и т. д.

В статье исследуются нормативно-правовые механизмы, регулирующие электронную торговлю, предложенные международными организациями и некоторыми интеграционными группировками, уточняются обязательства Армении и других стран ЕАЭС по отношению к ним, а также рассматривается уровень правового регулирования электронной торговли в отдельных странах и регионах. В контексте международно-правовой базы, регулирующей электронную коммерцию, обсуждается законодательство РА, относящееся к данной сфере, выявляются существующие

недостатки и противоречия в различных правовых актах и предлагаются адекватные решения.

Ключевые слова: электронная коммерция, типовые законы, конвенции, соглашения, Организация объединенных наций, Всемирная торговая организация, Всемирная таможенная организация.

JEL: F13, L81

ANNA PAKHLYAN

*Associate Professor at the Chair of International Economic Relations at ASUE,
PhD in Economics*

SUSANNA AGHAJANYAN

*Assistant Professor at the Chair of International Economic Relations at ASUE,
PhD in Economics*

CARMEN GRIGORYAN

*Assistant Professor at the Chair of International Economic Relations at ASUE,
PhD in Economics*

TSOYAK VOSKANYAN

PhD Student at the Chair of International Economic Relations at ASUE

TIGRAN GHALAYAN

MA Student of Applied Statistics and Data Science at ASUE

Republic of Armenia in the Context of Electronic Commerce International Regulation.–

Institutional transformations due to e-commerce have reached the deep foundations of economic relations, as traditional e-commerce institutions are being replaced by e-innovation institutions. From this point of view, the development of e-commerce is imperative to create an appropriate infrastructure and operating environment, which will ensure an equal access of all market participants to the global e-marketplace.

The creation of a complete legal framework is a precondition for the development of e-commerce, which implies the simplification of electronic transaction procedures and the elimination of barriers to market entry. In order to ensure a favorable legal framework, legislative reforms should be implemented both to regulate the e-commerce of goods and services, as well as in a number of related areas, such as the use of electronic payment systems, logistics, promotion of supply chains, etc.

The paper examines the legal-normative mechanisms of e-commerce regulation proposed by international organizations and some integration unions, clarifies the commitments undertaken by Armenia and other EEU countries towards them, and considers the level of legal regulation of e-commerce in individual countries and regions. In the context of the

international legal framework regulating e-commerce, the RA legislation related to the sphere has been discussed, the shortcomings and contradictions in various legal acts have been revealed, and adequate solutions have been proposed.

Key words: *e-commerce, model laws, conventions, agreements, United Nations, World Trade Organization, World Customs Organization.*

JEL: F13, L81